Որբուհի Կո՛յս, զայն կատարեա,
Զսէր մայրութեանդ ի նա հեղեա,
Կաթամբ գթոյդ զնա կերակրեա,
Ընդ հովանեաւդ ամփոփեա։
    Ի յարկածից դիւաց պահեա,
    Ի պատահմանց պատսպարեա,
    Ի չար ախտից ըզնա բուժեա,
    Զի Սրբուհւոյդ ծառայ է նա։
Թամեալ յորդեացդ զնա դասեա,
Զշնորհս Հոգւոյն առ նա հեղեա,
Եօթնեակ հոգւով զնա զարդարեա,
Ի ծոց գթոյդ զնա ամփոփեա։
    Ի սէր քո միշտ ըզնա կանխեա,
    Ընդ ձեռամբ քով կառավարեա,
    Ընդ հովանեաւդ ապահովեա,
    Ընդ քո ծառայս ըզնա թուեա։
Յօղեա՛ զգութդ և դա[ր]մանեա՛,
Գործըս բարիս յառաջադրեա,
Պէս պէս շնորհօք կարգադրեա,
Իբրև զմայր ի նա գթա։
    Որդւոյ քոյին ըզնա յանձնեա,
    Շնորհիւ նորին պարուանդեա,
    Ի գործս նորին յօժանդ[ակ]եա,
    Սիրով քոյին ի նա հայեա։

8. Թղ. 98բ–99ա. «Յիշատակարան Աստուածաշունչ գրոց՝ արարեալ ի Կոմիտաս իրիցուէ»։ Գրուած 1688 թուին, ոտանաւոր, բաղկացեալ ինը տուներէ, որոնց սկզբնատառերը կը յօդեն՝ ԿՈՄԻՏԱՍԻ Ե։
Սկիզբը՝ «Կենագործօղն էիցըս Աստուածն ամենի,
    Ասաց գրել մեծ մարգարէին Մովսէսի»։
Վերջը՝ «Եղեւ կտակս իմ այս հաստատ և անխափան,
    Ի թուականի մերոյ Փրկչին Ներմարդութեան,